*Հավելված N 2*
*ՀՀ վարչապետի 2018 թ. սեպտեմբերի 19-ի N 1230-Ն որոշման*

# Հ Ա Շ Վ Ե Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն
# ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

**1. Անունը, ազգանունը, զբաղեցրած պաշտոնը.**

- **Հասմիկ Հակոբյան** — ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության գլխավոր քարտուղար
- **Արսեն Թարգյան** — ՀՀ փոխվարչապետ Տիգրան Խաչատրյանի օգնական
- **Ավետիք Դարբինյան** — ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի տեղակալ
- **Թամարա Սարգսյան** — ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության հանրակրթության վարչության պետ
- **Տիգրան Գևորգյան** — ՀՀ ներքին գործերի նախարարության հաշվառման-քննական ծառայությունների մատուցման, թույլտվությունների և լիցենզավորման վարչության պետի տեղակալ

**2. Գործուղման վայրը և ժամկետները.**

ք. Դուբայ (Արաբական Միացյալ Էմիրություններ), 2026 թ. հոկտեմբերի 27-29

**3. Հրավիրող կողմը.**

Արաբական Միացյալ Էմիրությունների կրթության նախարարություն:

**4. Գործուղման նպատակը (աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը).**

ՀՀ կառավարության կողմից իրականացվող «300 դպրոց» ծրագրի (300 հանրակրթական ուսումնական հաստատությունների կառուցման, վերակառուցման, հիմնանորոգման և վերանորոգման) շրջանակներում շինարարական աշխատանքների ավարտին զուգահեռ ձեռնարկվում են ուսումնական հաստատությունների ցանցի օգտագործման արդյունավետության բարձրացմանն ու կրթական որակյալ ծառայությունների հասանելիության ապահովմանն ուղղված համալիր քայլեր: Այս համատեքստում առանցքային բարեփոխումներից է տարբեր բնակավայրերի սպասարկման համար նախատեսված դպրոցներում դպրոցական ավտոբուսի ծառայության ներդրումը:

Քանի որ ԱՄԷ կրթության նախարարության կողմից դպրոցական ավտոբուսների համակարգը ներդրվել է դեռևս 2014 թվականից, գործուղման հիմնական նպատակն էր տեղում

մանրամասն ուսումնասիրել ԱՄԷ հաջողված փորձը՝ կառավարման, տեխնոլոգիական լուծումների, անվտանգության ապահովման և գործառնական կազմակերպման տեսանկյուններից:

**5. Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը.**

Գործուղման ընթացքում Հայաստանի պատվիրակությունը աշխատանքային հանդիպումներ է ունեցել ԱՄԷ կրթության նախարարության գործընկերների, դպրոցական ավտոբուսների համակարգման աշխատանքները կազմակերպող ստորաբաժանման ղեկավար կազմի, ինչպես նաև ծառայությունները մատուցող մասնագիտացված կազմակերպության ներկայացուցիչների հետ: Պատվիրակությունը նաև այցելել է «Al Nada» մանկապարտեզ՝ տեղում ուսումնասիրելու երեխաների փոխադրման և անվտանգության կազմակերպման գործնական ընթացակարգերը:

ԱՄԷ կրթության նախարարության ներկայացուցիչների կողմից ներկայացվել է դպրոցական ավտոբուսների ամբողջական համակարգը. ներկայումս ԱՄԷ 7 էմիրություններում գործարկված է 5,666 դպրոցական ավտոբուս: Ծառայությունները մատուցվում են մրցութային եղանակով ընտրված 2 մասնավոր կազմակերպությունների կողմից (որոնցից մեկը սպասարկում է 2 էմիրություն, մյուսը՝ մնացած 5-ը): Մատուցվող ծառայության մեջ ներառվում է նաև ավտոբուսների ձեռքբերումը և ապահովումը: Դրանք ձեռք են բերվում և հարմարեցվում են ստանդարտներին, որոնց որպես դպրոցական ավտոբուս սպասարկման համար սահմանված է առավելագույնը 6 տարի կամ 300.000 կմ շահագործում: նախատեսվում է Պետական հանրակրթական դպրոցների թիվը 522 է, սովորողների ընդհանուր թիվը՝ շուրջ 300,000: Դպրոցական ավտոբուսի ծառայությունից օգտվում է սովորողների 80%-ը. ծառայությունն ամբողջությամբ անվճար է և ֆինանսավորվում է պետական բյուջեի հաշվին:

Դպրոցական ավտոբուսների ծառայությունը կառուցված է 6 հիմնական հենասյուների վրա.

- Կառավարում,
- Ցանց,
- Տեխնոլոգիա,
- Անվտանգություն և ներառականություն,
- Մարդիկ և համագործակցություն,
- Կայուն զարգացում և միջավայր:

Գործընթացի վերահսկողությունն ու մշտադիտարկումն իրականացվում են Կրթության նախարարության առանձնացված ստորաբաժանման տեսուչների միջոցով, ովքեր իրականացնում են ավտոբուսների պարբերական և չնախատեսված ստուգումներ դպրոցներում և երթուղային սպասարկման վայրերում: Ստուգվում է ստանդարտներով սահմանված չափանիշների խստիվ պահպանումը: Խախտումների արձանագրման դեպքում ծառայություն մատուցող կազմակերպության նկատմամբ կիրառվում են ֆինանսական տույժեր/տուգանքներ, ինչպես նաև ծառայության արժեքի վճարման վերանայումներ:

Մոնիթորինգի հիմնական մեխանիզմը նախարարության կողմից համակարգվող կենտրոնացված տեղեկատվական համակարգն է, որն առցանց (real-time) ռեժիմով հետևում է ամբողջ գործընթացին: Տեղեկատվական կառավարման կենտրոնում (որտեղ ծառայություն

մատուցող յուրաքանչյուր կազմակերպության համար գործում է առանձին կառավարման կենտրոն՝ 1 և 3 աշխատակցով) էկրանին հասանելի է սպասարկման տարածքի քարտեզը՝ ավտոբուսների ամբողջական ցանկով: Խոշորացնելու դեպքում հնարավոր է տեսնել յուրաքանչյուր ավտոբուսի ճշգրիտ երթուղին, սրահում երեխաների և վարորդի ներկայությունը: Կատարողականով սահմանված յուրաքանչյուր խախտման դեպքում (վարորդի վիճակ, տեխնիկական անսարքություն) կառավարման կենտրոնը և օպերատորն ակնթարթորեն ստանում են ծանուցում: Խնդիրը պետք է կարգավորվի կամ վարորդը փոխարինվի 20 րոպեի ընթացքում (ծառայություն մատուցողն ապահովում է 5% լրացուցիչ պահուստային վարորդների ներգրավվածություն):

Անվտանգության և տեխնիկական հագեցվածության ապահովման նպատակով կիրառվում են հետևյալ լուծումները.

- Ավտոբուսների ներսում և դրսում տեղադրված են 8 տեսախցիկներ, որոնք ապահովում են լիարժեք տեսանելիություն:
- Տեղադրված են հատուկ սարքեր, որոնք հաշվում են ավտոբուսում գտնվող երեխաների թիվը և չափում նրանց ջերմությունը:
- Կիրառվում են անհատական քարտեր. քարտի բացակայության դեպքում ուղեկցողն անձամբ է նշում կատարում համակարգում:
- Անվտանգության հատուկ կոճակը տեղադրված է ավտոբուսի վերջնամասում (անհրաժեշտ է շարժիչն անջատելու համար): Սա պարտադրում է վարորդին անցնել ավտոբուսի ամբողջ սրահով և ստուգել՝ արդյոք բոլոր երեխաներն իջել են, նախքան շարժիչը կանջատվի:
- Ավտոբուսները 3 հիմնական չափսի են՝ փոքր (մինչև 20 նստատեղ), միջին (մինչև 35) և մեծ (մինչև 50):
- Երթևեկության առավելագույն տևողությունը սահմանված է 60 րոպե (ներառյալ երեխաներին վերցնելու ժամանակահատվածը):
- Մեկ ավտոբուսով տարբեր կրթական աստիճանների երեխաներ փոխադրելիս կիրառվում է տարիքային բաժանում հենց ավտոբուսի սրահում:
- Եղանակային անբարենպաստ պայմաններում (մառախուղ, հորդառատ անձրև) ավտոբուսների տեղաշարժն արգելվում է. երկարատև դեպքերում ուսուցումն իրականացվում է հեռավար:

Ծնողների համար գործընթացի թափանցիկությունն ապահովվում է հատուկ բջջային հավելվածի միջոցով, որով ծնողն անմիջապես ծանուցում է ստանում երեխայի՝ ավտոբուս նստելու, իջնելու և ընթացիկ երթուղու վերաբերյալ: Երեխաների ընդգրկումն իրականացվում է ծնողների դիմումի հիման վրա: Ծառայություն մատուցող կազմակերպությունը նախապես գծագրում է բոլոր ուղեգծերը, իսկ ուսումնական տարվա մեկնարկից առաջ ավտոբուսն անցնում է բոլոր հասցեներով՝ տեղակայումը ճշգրտելու նպատակով: Երեխային վերցնում են անմիջապես ծնողից/ներկայացուցչից և վերադարձին հանձնում ծնողին: Ծնողի բացակայության դեպքում երեխան վերադառնում է դպրոց, իսկ դեպքի կրկնության դեպքում ներգրավվում է երեխաների պաշտպանության համապատասխան մարմինը:

Ծառայություն մատուցող մասնավոր կազմակերպություններն ի սկզբանե ձեռք են բերում ստանդարտներին հնարավորինս մոտ մեքենաներ, որոնք կահավորվում և տեխնիկական վերազինում են անցնում ըստ էմիրության սահմանած պահանջների: Վարորդները և ուղեկցողները

հանդիսանում են կազմակերպության աշխատակիցներ և անցնում են պարտադիր նախնական ու ընթացիկ վերապատրաստումներ: Ավտոբուսների ամենամյա սերտիֆիկացումն իրականացվում է ԵՄ ստանդարտներին մոտարկված չափանիշներով:

**6. Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը.**

- Ձեռք է բերվել պայմանավորվածություն, որ ԱՄԷ կրթության նախարարությունը ՀՀ կողմին կտրամադրի դպրոցական ավտոբուսների ծառայություն մատուցող կազմակերպությունների ընտրության ստանդարտներն ու չափանիշները:
- Քննարկվել են Հայաստանի մասնագիտական խմբերի հետ հետագա աշխատանքային հանդիպումների անցկացման հնարավորությունները՝ դպրոցական ավտոբուսների համակարգի ներդրումը Հայաստանում առավել արդյունավետ և տրամաբանված կազմակերպելու նպատակով:

**7. Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները.**

Հանդիպումների, քննարկումների և փորձի ուսումնասիրության արդյունքում առաջարկվում է.

- **Կառավարման և հաշվետվողականության մոդելի ձևավորում.** Մանրամասն ուսումնասիրել ԱՄԷ ձևավորված համակարգը՝ հատկապես կառավարման և հաշվետվողականության տեսանկյունից: Կարևոր է, որ հենց ամենասկզբից իրականացվի պատասխանատվությունների հստակ բաշխում՝ սկսած պետական կառավարումից (ԿԳՄՄՆ, ՏԿԵՆ, ՆԳՆ) մինչև գործառնական կազմակերպում և վերահսկողության սահմանում՝ կարևորելով շարունակական զարգացման միտումը:
- **Տեղեկատվական համակարգի և բջջային հավելվածի մշակում.** Քննարկել Կրթության կառավարման տեղեկատվական համակարգին ինտեգրված կամ դրա հետ տվյալների փոխգործելիություն ունեցող, ավտոբուսների կառավարման առցանց հարթակի և ծնողական բջջային հավելվածի մշակման հնարավորությունները, նպատակահարմարությունը և ծախսարդյունավետությունը:
- **Անվտանգության չափորոշիչների և վերապատրաստման սահմանում.** գործընկեր գերատեսչությունների հետ համատեղ սահմանել դպրոցական ավտոբուսների տեխնիկական, անվտանգային չափորոշիչները, սերտիֆիկացման կարգը, ինչպես նաև վարորդների և ուղեկցողների պարտադիր վերապատրաստման չափանիշները:

**8. Ստորագրությունը, ամսաթիվը.**

**3 նոյեմբերի 2026թ.**

HAKOBYAN HASMIK 5610800161
Digitally signed by HAKOBYAN HASMIK 5610800161
DN: c=AM, st=••••••••, givenName=••••••, serialNumber=5bdc672203a3, cn=HAKOBYAN HASMIK 5610800161
Date: 2026.11.03 08:28:16 +04'00'

**Հասմիկ Հակոբյան**

**Թամարա Սարգսյան**